HAL
open science

[redacted]

Koryun Atoyan

To cite this version:

Koryun Atoyan. [redacted]. Contemporary issues of innovative development in the Republic of Armenia and the Russian Federation, Yerevan - Rostov-on-Don, Jun 2011, Yerevan, Armenia. pp.5-8. ⟨hal-03284628⟩

HAL Id: hal-03284628

https://hal.science/hal-03284628v1

Submitted on 12 Jul 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

Autorisation HAL

HAL Authorization

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր, ՀՊՏՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Հիմնաբառեր. *նորաստեղծական զարգացում, նորաստեղծական զարգացման տեսլական, մակրոտնտեսական և միկրոտնտեսական մրցակցային կարողություններ, տեխնոլոգիատար արտադրանք, արտահանման մրցունակություն*

XX դարավերջի տնտեսական և տեխնոլոգիական գլոբալ իրադարձությունները բնութագրվում են տնտեսության և առևտրի ազատականացման աննախադեպ տեմպերով: Հետխորհրդային երկրների և Հայաստանի՝ նոր տնտեսակարգի անցնելու հիմնահարցերի հետ Հայաստանի տնտեսությանն առաջադրվեցին նոր խնդիրներ. հայրենական արտադրանքն արտաքին շուկաներ հանելու մատչելիություն, ազգային արտադրատեսակների և ներքին շուկայում դրանց արտասահմանյան նմանակների մրցակցության ծավալում, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների համար գլոբալ մրցակցության ուժեղացում: Համաշխարհային տնտեսությանը Հայաստանի տնտեսության ինտեգրման մրցակցային այդպիսի միջավայրի և հիմնախնդիրների պայմաններում մասնավոր հատվածի ուժեղացման ու ամրապնդման մակրոտնտեսական և միկրոտնտեսական մրցակցային կարողությունների ստեղծումը ՀՀ տնտեսության զարգացման ռազմավարության կարևոր տարրն է: Հետևաբար ազգային տնտեսության մրցակցային ներուժի մեծացումը դիտվում է երկրի զարգացման գերակայություն: Այդ տեսանկյունից կարևորվում են ձեռնարկատիրության համար տնտեսական նպաստավոր պայմանների ստեղծմանը միտված ինստիտուցիոնալ վերափոխումները, ինչպես նաև ներդրումային մթնոլորտի բարելավման խթանները:

Տեխնոլոգիատար արտադրանքի արտահանման ծավալի մեծացումը դրա մրցունակության բարձրացման հիմնական ցուցիչներից է, ինչը մատչելի է դարձնում գլոբալ շուկաները: Մի շարք երկրներ իրենց մրցունակության բարձրացման գործում հաջողության են հասել ի հաշիվ արտահանման ծավալում տեխնոլոգիատարության ավելացման: Հայաստանի արտահանման ծավալը, անցած դարի 90-ական թվականների խոր անկումից ի վեր, նշանակալի մեծացել է, ընդլայնել աշխարհագրությունը: Այդուհանդերձ, չնայած ՀՀ Կառավարության գործադրած ջանքերին՝ դեռևս թույլ են արտահանման դիվերսիֆիկացման միտումները, ինչի պատճառով դրա տեխնոլոգիական բաղադրիչը մնում է փոքր: Թեպետ որոշակի առաջընթաց նկատվել է, այնուամենայնիվ, սպասելիքները չեն արդարացել: Արտահանման ծավալում նախկինի պես գերակայում են հանքահումքային արտա-

դրանքը (2010 թ.՝ 27.3%), թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (2010 թ.՝ 13.5%), ոչ թանկաժեք մետաղներն ու դրանցից պատրաստված իրերը (2010 թ.՝ 23.3%): Բարձր և միջին տեխնոլոգիական արտադրանքը 2010 թ. արտահանման ծավալում կազմել է 5.8% (սարքեր ու ապարատներ, մեքենասարքավորումներ, քիմիական արտադրանք և այլն): Վերջին տարիներին այդ ցուցանիշը մնացել է գրեթե անփոփոխ:

Նման իրավիճակի պահպանումը խոչընդոտում է ազգային արտահանման մրցունակության բարձրացմանը: Հետևաբար երկրի ընդհանուր զարգացման, համաշխարհային տնտեսությանն արժանապատիվ ինտեգրման տեսանկյունից տեխնոլոգիատար արտադրանքի արտահանման ծավալի մեծացումը կենսական նշանակություն ունի: Այդ համատեքստում առանձնակի կարևորություն է ստանում դրան ուղղված ազգային արդյունաբերական ռազմավարության իրագործումը:

Անցումային շրջանը հաջողությամբ հաղթահարած Հայաստանի Հանրապետության համար ներկա փուլում հրատապ է նորաստեղծությունների ինտենսիվացումը. դրա անհրաժեշտությունը պայմանավորված է սեփական արտադրության զարգացման և ազգային կայուն եկամուտների ապահովման հենքի ստեղծման, երկրի մրցունակության տեսանկյունով: Պետության կողմից նորաստեղծությունների խթանման նպաստավոր պայմաններն ապահովվում են հետևյալ ուղիներով.

- ներդրումներ կրթության բնագավառում,
- աջակցություն գիտական հետազոտություններին,
- գիտահետազոտական հաստատությունների ստեղծում և դրանց աջակցություն,
- հետազոտություններում, նորաստեղծություններում ընկերությունների ներդրումների խրախուսում,
- գիտական հաստատությունների և գործարար հանրության միջև սերտ կապերի հաստատում,
- մտավոր սեփականության իրավունքների պաշտպանություն,
- նորաստեղծությունների առևտրայնացման համար փոխհատուցումների տրամադրում:

Ավելին՝ օտարերկրյա կապիտալի նկատմամբ շատ երկրներում իրականացվում է վերահսկողություն՝ օտարերկրյա ներդրումների միջոցով առաջավոր տեխնոլոգիաների փոխանցումն ու տեղական պայմաններին հարմարեցումը երաշխավորելու համար: Բացի դրանից, երկրները ձգտում են իրենց ազգային արտադրանքի արժեքի ստեղծման շղթաները հանգուցել բարձր տեխնոլոգիաների ու առաջավոր գիտելիքների վրա հիմնված գլոբալ արտադրանքի արժեքի ստեղծման շղթաներին: Թեպետ ՀՀ Կառավարությունը ջանքեր է գործադրում այդ ուղղությամբ, այդուհանդերձ, դեռևս մեծ չէ համալսարանների, ուսումնագիտական հաստատությունների ֆինանսավորումը, ինչն էլ հետազոտությունների ընդլայնման ու զարգացման հնարավորություն չի ընձեռում, դեր չի խաղում նորաստեղծությունների միջավայրի բարելավման գործում: Միաժամանակ, գիտության ու տեխնոլոգիաների բնագավառներում զգացվում է մասնագետների և որակյալ աշխատուժի

պակաս, որն, իր հերթին, հանգեցնում է նորաստեղծությունների բնագավառում պակասության ազգային լիարժեք կարողությունների, որոնցով պայմանավորված է արտասահմանում և տեղում արմատավորված տեխնոլոգիաների յուրացումը, հետևաբար՝ նորաստեղծական ապրանքների ու ծառայությունների ստեղծումը: Ավելին՝ հետազոտություններում և մշակումներում մասնավոր հատվածի ներդրումները դեռևս սահմանափակ են, ինչը դժվարացնում է գիտական հետազոտությունների արդյունքների ու տեխնոլոգիական նորաստեղծությունների առևտրային օգտագործումը: Հարցի կարևորությունը՝ Հայաստանի Հանրապետության մրցակցային դիրքերի ամրապնդման վրա բացասական ազդեցության առումով, գերակա են դարձնում դրա լուծման քաղաքականության կենտրոնացումը և համապատասխան կառուցակարգերի գործադրումը:

Վերոնշյալը հիմք է՝ եզրակացնելու, որ դեռևս հստակ ձևակերպված չէ ՀՀ նորաստեղծական զարգացման տեսլականը, ինչը, շատ դեպքերում, չի նպաստում այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերի նպատակամիտությանը:

Հայաստանի Հանրապետության նորաստեղծական զարգացման տեսլականը կարող է ձևակերպվել հետևյալ կերպ. «Շարունակել տնտեսության նորացումը գլոբալ մրցունակության տեսանկյունից, այդ թվում՝ ամրապնդել համաշխարհային շուկայում ընկերությունների և նրանց արտադրանքի մրցակցային դիրքերը, ընդլայնել հայրենական ապրանքների ու ծառայությունների հնարավորությունները՝ ներմուծվող արտադրանքի հետ մրցակցելու նպատակով, մեծացնել ներդրումային միջավայրի կարողությունը՝ ազգային, ինչպես նաև օտարերկրյա կապիտալի ներգրավման համար»:

Հետխորհրդային երկրների և Հայաստանի՝ նոր տնտեսակարգի անցնելու հիմնահարցերի հետ Հայաստանի տնտեսությանն առաջադրվեցին նոր խնդիրներ. հայրենական արտադրանքն արտաքին շուկաներ հանելու մատչելիություն, ազգային արտադրատեսակների և ներքին շուկայում դրանց արտասահմանյան նմանակների մրցակցության մեծացում, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների համար գլոբալ մրցակցության ուժեղացում: Նշված խնդիրների լուծմանը համալիր մոտեցման տեսանկյունից հոդվածում կարևորվում է երկրի նորաստեղծական զարգացման տեսլականի ձևակերպումը, ինչը կնպաստի այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերի նպատակամիտությանը:

КОРЮН АТОЯН

ПРОБЛЕМЫ И ВИДЕНИЕ ИННОВАЦИОННОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Наряду с проблемами, связанными с переходом постсоветских стран и Армении к новому экономическому строю, перед экономикой Армении поставлены новые задачи: доступность вывоза отечественной продукции на внешние рынки, увеличение конкуренции между видами национальной продукции и их иностранными аналогами на внутреннем рынке, а также усиление глобальной конкуренции за иностранные инвестиции. С точки зрения комплексного под-

хода к решению намеченных задач, в статье считается важным формулирование видения инновационного развития страны, что будет способствовать целеустремленности предпринятых шагов в этом направлении.

KORYUN ATOYAN

PROBLEMS AND VISION OF INNOVATIVE DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Along with the difficulties associated with the transition of post-Soviet countries and Armenia to the new economic structure, the Armenian economy met some new challenges: access of domestic products to foreign markets, increasing competition between national products and their foreign counterparts in the domestic market, as well as increased global competition for foreign investment. From the perspective of complex approach to solving these problems, the formation of country's innovative development vision becomes important, which will contribute to the directity of the steps taken in this direction.

НИКОЛАЙ КУЗНЕЦОВ,
доктор экономических наук,
профессор, Ростовский
государственный экономический
университет (РИНХ)

ПОТЕНЦИАЛ МАРКЕТИНГОВОГО ЗНАНИЯ В ОБЕСПЕЧЕНИИ РАЦИОНАЛЬНОСТИ ПОВЕДЕНИЯ ПОТРЕБИТЕЛЕЙ

Ключевые слова: *маркетинг, концепция, мышление, потенциал, сознание, обмен, сообщение, рыночная информация, рыночные процессы, маркетинговые исследования, поведения потребителей*

С точки зрения реальности рынка, проблема формирования и развития маркетингового мышления в отечественной предпринимательской среде, в эволюции от чистой теории к практическим навыкам решения хозяйственных ситуаций, еще не получила должного подтверждения. Осознание единство маркетинговой теории и практики, маркетингового мышления и результата от практического применения маркетингового знания еще не произошло.

С одной стороны, это можно объяснить объективностью процесса маркетингового знания, что рядом исследователей психологии маркетинга объясняется фразой - «маркетинговое